Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

1489 – 1494

49:.99
Б-74

2810

002

1. [illegible]
2. [illegible]
3. [illegible]
4. [illegible]
5. [illegible]
6. [illegible]
[illegible]

891.99
Ա-30
1002
5636

# ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ

## ԱԼԱՄԴԱՐԵԱՆՑ

# ՉԱՓԱԲԵՐԱԿԱՆՔ

(ծն. 1796, վախճ. 1834)

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
ՏՊԱՐԱՆ Ա. Ա. ԿՐԱԵՎՍԿՈՒ։
1884.

Дозволено цензурою. С.-Петербургъ, 31-го Января 1884 года.

Типографія А. А. Краквскаго (Бассейная, № 2).

ՄՕՐ ԻՒՐՈՒՄ

ԱՆՆԱՅԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՊԱՏԿԱՆԵԱՆ

ԴՍՏԵՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԵՂԱՄԴԱՐԵԱՆՑ

Նուէրէ Մ. Պ.

## ԱՄԵՆԵՒԻՆ ԵՍ ԳԵՂԵՑԻԿ, ՄԵՐՁԱՒՈՐ ԻՄ, ԵՒ ԱՐԱՏ ԻՆՁ ՈՉ ԳՈՅ Ի ՔԵԶ։

Երգ Դ. 7.

ՆԱԶԵԼՒՈՅՍ դէմքն էր ձիւնանկ ու կարմիր,
Հրաշադէմ, չքնաղ, աննման ունէր։
Շնորհաշուք հասակն չէր երկայն կամ ցած,
Միջակ և քնքուշ՝ զարմանք տեսողաց։
Գլուխն էր պճնազարդ ոսկեփայլ վարսիւք.
Հիւս նոցա պլլէր զաչս անզգաստից։

Փայլէր ճակատուն լոյս ի հայեցողն.
Յօնք իւր՝ աղեղունք նետարձակ մարդկան։
Ի լայն յօնամէջն կայր տիպ հանճարոյ.
Պարկեշտ տեսք աչացն քաղէին զհոգի։
Ճոխ յայտից վերայ բոց վարդք ժպտէին.
Շարք ջինջ ատամանցն էր մարգարտայեռ։

Զմռքօք պատէին շրթունք հրատապք.
Ի լեզուէն կաթէր շունչ արծարծ կենաց։
Ձայնն էր հրեշտակի, անջինջ ի սրտէս.
Բերանոյն խօսուած հրով պէս ազդէր։
Ծոցն էր լի հրով, սաէնք բոցավառք.
Լանջացն զովեստ՝ չէ բան իմ լեզուի։

Ակն իմ ի հեռուստ զհրաշուդ տեսանէր,
Մօտիլ չկարէր, գաղխ զալարէր:
Այս նշանք սիրոյս. զայլ ինչ չէ՛ք ասել.
Որուսի զնա՝ այլ ոչ գտանեմ:
Պատմեցէք, մարդիկ, թէ տեսիք զնա,
Պատմեցէ՛ք, եղբարք, թէ կայ սիրտ ի ձեզ:

Կաթոտ խանդակաթ եմ ի սէր նորա,
Լացոտ արտասուօտ որոնեմ զնա:
Կեանք իմ մաշեցան յոգւոց հանելով,
Աչք իմ կուրացան միշտ արտասուելով.
Ուշ իմ ցրուեցաւ միշտ մտածելով,
Հոգիս քաղեցաւ շատ մորմոքելով:

Այդ զի՞նչ կսկիծ է, այդ զի՞նչ չար տանջանք.
Փարեայ սիրտ պիտի հանդուրժել դոցա:
Թ՛է լուր ինչ չունիք զանգին չքնաղէս,
Թ՛է ինձ չէք հնար գտանել զնա՝
Ինձ յախտս եկայք անչափ նեղելոյս,
Ողջ ողջ դի՛ք յարգանդ մութ գերեզմանի:

Երբ յիշեմ զանուն իմ սիրականի՝
Յօդուածք իմ դողան, սիրտ իմ սարսափի:
Դուք ի զուր ջանայք զիս մխիթարել.
Չկայ կէս սրտիս՝ զիա՞րդ ապրեցայց:
Իմ կեանք այլ չեն կեանք տանց փարելոյս.
Իմ ցաւոյս դեղն է մահն, սիրելիք:

12 Օգոստ. 1821. ի Մոսկով:

## ԿՈԾ:

Մռնչէի առ հեծութեան սրտի իմոյ: Սաղմ. ԼԷ. 9:

Յար վառ է կայծ սիրոյ սիրոյդ
Ի վերալից սրտի գերւոյդ, ո՜հ, ի յանձին գերւոյդ.
Յորմէ յաւէտ խիստ տօչորի
Հալի, մաշի հոգի այրւոյդ. ափսո՜ս կենաց գերւոյդ:

Երդ անաստուն գործք արարչին,
Անխնաբար կոծեցէք զնա, վա՜յ, ողբացէք զնա.
Զանյագ արգանդ բացէք զերկիրս,
Ընդ կենդանւոյն թաղեցէք զնա. աւա՜ղ, մի՛ խնայէք յնա:

Բամից թռչնոց պարծանք տատրակ,
Անվարուժան, ամայրենակ, վա՜յ, քեզ եմ քատակ.
Զմէ՞ սիրելեք մեր անքատակ
Հարին ի սիրտ մեր զայս սլաք, եղո՜ւկ, զմահաբեր սլաք:

Ուրախ ձայնիւ մի՛ գայլայլեր,
Զայրւոյս այրած սիրտ մի՛ ճմլեր, ո՜հ, զվէրս մի՛ նորոգեր.
Ներգաշնակեդոյս զուգերգող լեր,
Դու լաւ գիտես, թէ զինչ է սէր. վա՜յ ինձ, հուր վառէ սէր:

Խւծիս ի շիւղ գոս մատենւոյ
Անկեր, անուամպ, գերի կոծոյ, ո՜հ, պատկեր ցաւոյ.
Զնետ՝ որ մեռոյց զվարուժան քոյ,
Նա, հար ի սեաւ տրտում սիրտ քոյ. ափսո՜ս, այլ հնար ոչ գոյ:

Թռչունք՝ մեզ կեր, ընկեր են,
Մերոց խոցից դեղ ու ճար են. ո՜հ, վէրք մեր շատ մեծ են.
Համակ զօդուածք մարմնոյս հեծեն,
Սարսին՝ այլ դեռ քայքայեալ չեն. բիւր վա՜յ, երբ հանգիցեն։

Ի յաւերակս ի յամայիս
Ձեռն ի ծոցի շրջիմ գերիս, ո՜հ, խնդրեմ զհոգիս.
Սեւափետուր տխրատեսիլ
Բուոյ ձայնից ձայնակցիմ ես. վա՜յ վա՜յ, այսպէս կեամ ես։

Հիւանդ զանձն իմ չընդունին հիւր
Ո՛չ հող, ո՛չ ջուր, ո՛չ օդ, ո՛չ հուր. վա՜յ գերւոյդ՝ սէր մաքուր.
Աղէտք՝ այրւոյդ են միշտ անուր,
Անվերջ, անկէտ եւ ջանք միշտ զուր. ո՜վ, փախեայց, բայց ո՞ւր։

Նուագս քեզ ձօն չէ՛ զուգակշիս,
Ո՛ Մարգարիտ՝ գանձ անկշիռ. ո՜հ ո՜հ, զեն անուր գենիր.
Քեզ ի նուէր չունիմ զայլ իր,
Զկեանս իմ դնեմ արդ ի կշիռ. ա՜ռ, առ մեռիր։

15 Օգոստ. 1821. ի Մոսկով։

## ՍՈՒԳ։

Յոյս իմ ի քեզ սեւ յաշխարհիս
Ցարդ չարաչար խոշտանկէ զիս,
Մտացս աչաց միշտ երեւիս,
Սիրոյդ հրով կիզես զհոգիս.
Ընդէն ընկեր, ոչ խնայես յիս,

Որ սէր ի քեզ մոռացայ զէս.
Զի՛մ սուգ արդ տե՛ս, փոյթ դա՛րձ առ իս
Լի՜ց զիմ փափագ, ո՛վ քեզ հոգիս:

Զի՛մ սիրտ ուրախ արևամբ լցեր
Թո՛ղ փախստեամբ արագ ի վեր.
Յանել վերստ զայրեղ արկեր,
Յոր թառամիմ իբրև ստուեր.
Ա՜խ, անմոռա՛ց կեանք, հոգի, սէր,
Այդպէս երբէք չէր պայման մեր.
Կեալ, մեռանիլ, ցնծալ, տրտմիլ
Ի միասին՝ խոստումն էր մեր:

Առանց քո ես զամ, ամիս, օր
Անցուցանեմ միշտ գլխակոր.
Դժգոյն դիմօք, սրտիւ տխուր
Մ՝աշեմ զկեանս հանապազօր.
Թէ՛ քեզ առ իս գալ չէ հնար՝
Գոնեա առ քեզ զիս փութով տար.
Հեռի ի քէն չունիմ դադար.
Կեանք այդպիսի քան մահ է չար:

Արդեօք զի՞նչ ցաւ քեզ պատահեաց,
Որ զիս ի քէն այդպէս զրկեաց.
Թէ՛ տէր էի ես աշխարհաց,
Իսկ առանց քո՝ որբ գետնամած:
Ե՞րբ ես զերծայց յայս տանջանաց,
Ե՞րբ մօտ հոգւոյդ մարմնով եկայց.
Այլ ձար, հնար իմոց վերայ
Ոչ գոյ, գոհա՜ր, հո՜գ իմ կենաց:

Չի՛ք չափ հեղման դառն արտասուաց
Յիմոց պղտոր միշտ թաց աչաց.
Լեղի իմ ջուր, մոխի՛ր է հաց,
Ննջ իմ՝ պատկեր զարհուրանաց.
Խոցով մարմնով կամ սևազգեաց,
Կամաւ զրկեալ յամէն բարեաց.
Ո՞չ տեսանես, զի այդպէս կեանք
Դառն է քան բիւր չար կատարած։

Ի 20-ն Աւգոստոսի 1821 ամի. ի Մոսկով։

## ԹՇՈՒԱՌՈՒԹԻՒՆ ՍՈԽԱԿԻ։

Յայգուն ընդ աղջամուղջն
Սոխակն մտեալ յայգին՝
Ճռջէր խի՛տ խի՛տ.
Ի ձայնէ աղջունի
Տերևոց ընդ տերևոց
Սարսափէր շի՛տ շի՛տ.
Նա սևաւ աւուրց,
Անիրաւ հալածմանց
Էր միշտ կի՛րթ կի՛րթ.
Չէ՛ր անտեղեակ գռեհիկ
Եւ ամարդի բարուց
Պարտիզպանին բի՛րտ բիրտ։

Յառաջէր հառաչէր,
Սիրտ իւր թռչնակի պէս
Դողդողայր բաբախէր.

Քանի առ թուփ վարդին
Մերձենայր մօտէր՝
Այնքան ցնորէր, քրտնէր և սարսէր·
Սիրտ իւր զարտմութիւն
Շատ ազդէր, գուշակէր,
Զարտասուս յաչացն քամէր.
Սրտաբեկ հառաչէր,
Մեղմ երգէր, լաէր,
Ամէն ձայնի ունկն դնէր։

Ծառազարդ ցօղոտ
Պճնազարդ այգին
Թուէր նմա անապատ աւերակ·
Զմայլելի բուրմունք
Նարգոսաց, շուշանաց,
Հոգեզուարճ, անուշակ,
Քաղցրաձայն նուագաց
Կերպ կերպ թռչնակաց
Իւր օրինակ եղանակ,
Արծաթի գոյն աղբերաց
Սպիտակ, սառնորակ՝
Սրտի նորա էր դահիճ ու դանակ։

Սոխակն իմ կոյր է.
Բայց ի վարդէ
Ոչ ինչ տեսանէ.
Սոխակին դիպան
Զճանապարհայն
Ծաղկունք պանդան.

Նա ոչ զոք ետես,
Ոչ ինչ խօսեցաւ,
Յոչ ինչ հայեցաւ.
Նա զայլ ոք խնդրէր,
Յառաջէր, հառաչէր,
Աչօք թացօք զվարդն որոնէր։

Յանկարծ թալկացաւ,
Կենդանի մեռաւ,
Ուշաբարձ անկաւ,
Ընդ թփով վարդին
Տեսեալ զթերթ նորին
Ընդ պերճ երանգին
Եկնախար բոսորին
Զգոյն շառագոյն եւ տեղին
Տարած ի գետին.
Մեծաձայն վայեաց
Վարդ իմ վարդ, ձայնեաց,
Զիւր շունչ վճարեաց։

Այլ անգին վարդ վարդ,
Իմ կենաց զարդ զարդ,
Ճոխ թերթիւք բարդ բարդ,
Բանիս լուր կարճ կարճ;
Բանի ես զուարճ զուարճ.
Տես զիմ լաց ու հառաչ,
Զարտօսր իմ սրբեա,
Զիս քեզ զոհ արա,
Զիմ ողբ ու լաց մեղմեա.

Ապա թէ ոչ՝ մեռայց·
Յետոյ քո անագան այց ու դարձ
Զօղնեսցեն խմոյ կենաց։

21 Օգոստ. 1821. ի Մոսկով։

## ՊԱՐԵՐԳՈՒԹԻՒՆ։

Յերկու ձեռին երկու մոմ՝
Ինձ ընդ առաջ եկ յիւր տան.
Մի հարցանէք ով էր նա,
Հրեշտակ, թէ կոյս լուսադեմ։

Ամօթն զնա վարդ արար,
Ես հիացեալ դարձայ քար.
Այն զինչ օր էր և զինչ ժամ,
Յորում տեսի ես կեանք նոր։

Ի խաճրադ յայնմիկ տան
Ի մարդաշատ բազմութեան
Ի մէջ աղջկանց և հարսանց
Յոտին կայր ոճն անդ յանկեան։

Այն օրիորդն էր պարկեշտ
Ինձ պատահեալ առ դրամբ տան.
Զոգիս գրաւեաց յիւր ի սէր,
Ի նմա տեսի ես կեանք նոր։

Մարգարտափայլ մարմինն էր,
Ճակատն էր յոյժ փայլուն.
Զուլֆքն իւր վարսք քարշ կային,
Ի գոյն քրքմոյ փայլէին։

Դիմացն չքնաղ երեւոյթ
Յօնից, աչաց, այտից գեղ,
Շրթանց լեզուին համ անոյշ՝
Խոստանային ինձ կեանք նոր։

Ա՜խ, ասացի թմրեցայ,
Սիրտս սկսաւ դողդողալ.
Զաշխարհ համայն մոռացայ
Ի գեղ կուսին ապշեցայ։

Բանք կոչելոցն յայն հանդէս
Ընդ իմ մեծ բաղդ ոխային.
Զի մերձաւորք այն կուսին
Փեսայ զանձն իմ ձայնէին։

Եթէ զաշխարհ լի գանձուք
Ինձ ոք բաշխէր ի պարգեւ՝
Ոչ տեսանէր այնքան լաւ՝
Որքան ի գոլս առ կուսին։

Արդեօք գուցէ յաշխարհի
Սիրոյ նման իր հզօր.
Սէրն ի ձեռաց Արարչին
Մեզ մահացուացս է ձիր նոր։

Նանրախորհուրդ ազգ մարդկան,
Հաստ մի՛ սիրեր դու զաշխարհ.
Նա թշնամի է անդութ,
Չար քան զքարբ մահաթոյն.

Յանցիւ սիրոյ զքեզ կարծէ,
Ի հաղբ անձն ըմբռնէ.
Եւս զխեղդ առարկայ
Ի քէն արդ կողոպտէ:

1 Հոկտ. 1821. ի Մոսկով:

## ՈՂՋՈՅՆ ՀՐԱԺԵՇՏԻ ՁԱԽԱԿԱՑ ԽՄՈՑ:

Հայր.

Հօր համայն որբոց, փրկչին Քրիստոսի
Յանձն առնեմ զձեզ՝ զաւակք նազելի.
Սուրբ աջոյ նորա անտես հովանի
Ի գլխոց ձերոց մի պակասեսցի:

Երթամ ես յաշխարհ ի ձէնջ յոյժ հեռի,
Երթամ որոնել զայն, զոր կորուսի.
Արտասուօք, ողբովք՝ ձայնիւ սրտալի
Խնդրեսցից զնա յամենայն երկրի:

Մարեամ.

Զի՞նչ խօսիս, Հայրի՛կ, զի՞նչ դու կորուսեր,
Եւ զի՞նչ գտանել յանծանօթ երկրի
Կամիս, ասա մեզ, մի՛ թագուցաներ,
Տա՛ր և զմեզ ընդ քեզ, Հա՛յր, մի՛ արտասուեր:

ԱՆՆԱ.

Հայր մեր, ես գիտեմ, բղխայր մեր ողբայ,
Զմահ նորա յիշեալ՝ մորմոքի, սրդայ.
Ո՞րք սա մեռացի զանուն, զկերպ նորա,
Ո՞րք հանդիստ տեսցուք մեք զհոգի սորա։

Կափարէնէ.

Մի՛ արտասուեր, Հայր, մի՛ ազար ողբար,
Արտասուք զքեզ մաշեցին խայտա.
Զիս ո՞ սիրեսցէ՝ զԿատեայս քո թշուառ՝
Թէ զքեզ Տէր տարցէ յիւր երկնից գաւառ։

21 Օգոստ. 1823. յԱստրախան։

## ԱՂՕԹՔ։

Էդ անեղ, աներբ, անկէտ, անսահման, անհաս ի մտաց,
Իքրովբէաբարձ յաթոռոյդ փառաց յայս մեր դաս հայեաց։
Ձե՛զ, Տէր սքանչելի, զաղերս անսպառ Հոգւոյդ քո շնորհաց,
Լուա՛ ի հոգւոց, ի կամաց, մտաց զախտ մերոց մեղաց։
Զքեզ ոչ ոք եսես, զքեն հողեղինացս Որդիդ քո պատմեաց.
Զքեզ ցոյց Հայր լուսոյ ոչ մարմնոց մերոց, այլ հոգւոյս աչաց։
Էակք ամենայն են ջինջ հայելիք՝ ցուցակք քոց փառաց,
Յոր տեսեալ զՈրէնդ՝ փառաւորեմք, հրճուիմք խնդութեամբ անանց։
Ուա՛ն, աղերսեմք, Անուն պաշտելի, շնորհատու բարեաց,
Քեզ երկրպագել, սիրով հնազանդել քոց քաղցր օրինաց։
Ընկալ հոգեսէր զօրութեամբ նուազս յանուէրս մեր շրթանց,
Այրեա՛ զմեր յանցանս հուրբ հզօր սիրոյդ աստուածոց Աս-
տուած։

Քեզ Հօրդ ընդ Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ, քոյին էակցաց
Փառք անլռելի, գոհութիւն, պատիւ, պաշտօն գետնամած:

15 Մայիսի 1825. ի Տփխիս:

## ՏԱՂԱՉԱՓՈՒԹԻՒՆ:

Արշալոյս աւուրս, սուրբ ջուրբ ոսկեալ լուսափայլ՝ զարփին՝
Լանջակցեալ նմա Հանէ խնդագին յիւր ծիր երկնային.
Մաղթեն երկրաց, պարգևէ նոր լոյս մարդկան երկրածին՝
Նոր օր, նոր տարի, նոր փառաց, զանուն, նոր գործ պան-
ծագին:

Կանոն հնաւուրց, յոգունց ատելի անյաղ ծերունի,
Յարաշխատ սատար բազմատեան արմին ճիշտ ժամանակի՝
Ուխտէ պահպանել անեղծ անախեղծ զգործ տաղքինի,
Մինչ զերեզմանել զիւր անգութ, հատու մանգաղ երկաթի:

Յայս հանդէս շքեղ դիմէ սիգաձեմ Յանոս երկգլխի,
Խոստմանց Հայել աչօք անկաշառ յանցեալ, յապառնի.
Ընտրել զգուշաւ զցորեան ի յարդէ, կամ լաւ կամ յոռի,
Կշռել զերկրածնաց զարարս ամենայն, զսին և զարդի:

Հետ ի սոցունց յաջկոյս եթերի Աթենաս բերկրի,
Ծիածան պայծառ լոյս մեծ գնդակ շուրջ փայլատակի.
Գրչաւ զերահրաշ անջինջ գծագրէ յանարուեստ մտի
Զանուն, զերախտիս մեծ ուսուցչի ուրուք ծեր Հայաստանի:

Ո՜հ, ո՞ր հողածին ժպիրհ պարզ աչօք Հայել մարթիցի
Յայն վէմ խորհրդեան, յայն գրուած չքնաղ, յայն անուն
յարգի:



1002
5636

Իմաստ, հմտութիւն, քաջ վերծանութիւն դպրաց կաճառի
Յայն նորատարազ գրուած անհատիկեալ՝ պապանձեալ կարկի:

Հոյլք վերծանողաց այն ինչ սրտառեկ խուռափին անտի՝
Փողէ յիթերէ գիւրինաց ձայնիւ երկթեւ ինչ ոգի.
Տայ տառից զանուն, արուեստէ զանուն մեզ յոյժ փարելի,
«Դու ես տէրն» հեգէ, «Ներսէս», բարբառի մեկին և յայտնի:

Զայնակցեալ նմին որդիք սիրածինք գթոյդ արգանդի՝
Սիրալից սրտիւք մատեաք առ խիկ ափոյդ սիրոյն Ներսէսի.
Զայն երկթեւ ոգւոյն ուժգին արձագանգս տայ ի մեր հոգի,
Խրախուսէ օրհնել, գոհանալ, գովել զքեզ, մեր Հայր բարի:

Ամենք շնորհաց Հոգւոյն ցօղեսցեն ի քեզ ցօղ համայն բարեաց,
Պսակ սատար լիցին կազդուրել, շինել զանեղծ յարկ փառաց.
Զանուանս զրաւական անանց հրճուանաց երկնից խորանաց
Նաեւ յայտնեսցեն ի քեզ, պետ հովուաց, ի յորդոր բարեաց:

1 Յունվարի 1828. ի Տփխիս

## ՏԱՂԵՐԳՈՒԹԻՒՆ:

Յայսմիկ նորահրաշ չքնաղ հանդիսի հոգւոյս տեսանի
Ի տասուեր նազելի տեսիլ սիրալի զիւցազն անձկալի,
Անձնեայ, թիկնաւէտ, քաղցրադէմ, խայտաժիտ, քաջալանջ, արի.
Սաղաւարտ ի գլուխ արծուէնիշ, բռնիր, լուսապանծ փայլի:
Նշաւիկ հրճուի, անպայման բերկրի.
Յայլ տասուերս հայլի, յորոց շուրջ պատէ

Յաջ բազուկ նորա աղեղն երեւի, լայնալիճ, լարեալ.
Ի ստուար կապարճի մահահոտ փքինք լիով կան լցեալ.
Խեթիւ ակնարկէ առ մեր աշխարհ դիմօք զայրացեալ,
Յայս համուռ Հայի Հայրօրէն սիրով, սրտիւ մորմոքեալ:
Թագազարդ, անթագ ստուերք լուսածագ
Գան, գնան, անյագ, յայտնին զմեծ փափագ:

Հայկ է, բազմականք, մեր անզոյգ Գեռ, Հայր, Նեղայ գլխա-
հար,
Հայկայն է ստուերս, նորին կերպարան, պատկեր անվթար.
Ո՜հ, ուստի՞ եմուտ նա յայս տեսարան, յայս յարկ պերճա-
փառ,
Եւ զի՞ քայլարկէ անկիւն յանկինէ՝ խրախ, յուսապատար.
Լռել հրամայէ, յայտնել խափանէ,
Զիւր մուտն աստ՝ գաղէ, խայտայ, արտասուէ:

Ի Թիկանց վեհին նազաքայլ ճեմեն Արամ մեծ անուն,
Զարմայր սաստ քաջաց, Պարոյր Թագակիրճ; Արայն քաջ,
սիրուն,
Արտաշէս աշխոյժ, Վաղարշակ խոհեմ, Խոսրով քաջազուն.
Զուգընթաց սոցին այլ ձեռք դիւցազանց ակնապիշ կասուն.
Վահագն անման, Վահէ, քաջն Վան,
Անուանին Տիգրան՝ յայսմ խմբի կան:

Եւ զի՞ սա խմբին ստուերք վեհազանց տան Արշակունեաց.—
Ի գնին իջին ի սեւ հանդերձի ողբուց զարդացման.
Արդ ժպտին, խնդան, միմեանց ակնարկեն, բայց բառնան կական,
Զի մեկնէ գնաս ի մէնջ մեզ մոլար կոչ պաշտաման:
Ո՜հ, մեկնին, ցրուին, ծխօրէն ցնդին.
Արիք երկնչին, խուճապին, փախչին:

*

Ահա տեսանեմ երկնից ցնծանել ի ծագ հիւսիսոյ,
Ոսկեզօծ փայլել ամպոց թխամած, նշուլել օդոյ.
Հանդէպ տարափոյ՝ հոծ խիտ թօթափին ցայտք աչեղ լուսոյ,
Վերուստ ի ներքցքս լոյն ուղէ հորդէ անմահից դասու.
Գումարտակ զուարթնոց, պարք հոգւոց սրբոց
Ի բարձանց ամպոց դիմեն յայց Հայոց:

Թադէ բազմարդիւն Տեառն, այգւոյ մշակ, տիրաջանն Աբգար,
Գրիգոր լուսաւոր, անձնանուէր հովիւ, սրբութեան սատար,
Սահակ Պարթեւիկ, Մեսրովբ բանիբուն և քերթողացն Հայր,
Նարեկայն հրեշտակ, շնորհապերճ Ներսէսք և սուրբ հայրց
կաճառ՝
Աստէն ամենին, քաղցրութեամբ հայեն,
Յեծան, սփոփեն, զմեզ խանդաղատին:

Հեզաձայն կարդան զերկնից օրհնութիւն յայս յարկ կրթական,
Միջնորդեն առ Տէր լինել Հիմնադրին յաւէտ օգնական,
Ընդ Ներսէսայ իւրեանց պահել յարկածից ազատ անսասան,
Եւ սփոփել կրկին զտխուր, զընկճեալ զիւրեանց Հայաստան:
Անեկիխա անսայ երկնից սուրբ Երգայ
Ձայնի արդարոց, այժմ և յարակայ:

Դու, որ զՄօր լուսոյ, սուրբ եկեղեցւոյ զորդիս տաս զգուես,
Կաթողին տածես, քաղցր արգահատես, յանձանձես, փարժես,
Դու, որ զհաւատոյ լոյս ի մեր հոգիս ջինջ ճառագայթես՝
Զանկշէս զփառս քոյդ հանդիսադրի աստէն զրաւես:
Ի խաւարս յայս կենաց, յաթոռդ փառաց
Լուր մեր մաղթանաց, յայս մեր Հայր հայեաց:

4 Փետրուարի 1827, ի Տփխիս:

## ՏԵՍԻԼ։

Յաղջամուղջ գիշերի, ի անդեան տխրագին,
Յարուցեալ թափառիմ յանծանօթ ի դաշտին։
Ընդ ինև ոչ ուղի, ոչ շաւիղ երևին.
Ընդ կապոյտ քող երկնից սևաթոյր ամպք կուտին։
Սիրտ իմ, միտք յայլանդակ ի կարծեաց խիստ յուզին,
Յակամայս զիս մղեն առ կատար մի լերին.
Ի յանցնիլս քայլափոխս խոչք և խութք ծնանին.
Այլ անտես ձեռք ուրուք անկործան զիս ունին,
Յանկմանէ զիս պահեն, ի փախից մեկուսին,
Յապահով, յարահետ պողոտայ վեր հանեն։

Այն ինչ ես անդր հասեալ ուշաբարձ, որոմայեմ,
Անթարթափ, սառն աչօք դէպ ինչ որոնեմ՝
Յանկարծուստ ի բարձանց պաշտաւոր ձայն լսեմ,
ՅԱրարատ երկնահաս զառեան վեհ տեսանեմ.
Զ՝հրաշագիր գրչութիւն յաջ զուարթնոյն նշմարեմ,
Յոր հայիլ սոսափիմ, մերձենալ ոչ իշխեմ։
Սա փողէ սոսկաձայն, յորմէ ցայտ սոսանիմ.
«Խմբեցին ասա, գոչէ, բոյլք հոգւոց լուսածնեմ,
Որք վարուք և արեամբ և քրտամբք ուղխածնեմ
Ոռոգեալ զՀայաստան՝ արարին նոր եդեմ»։

Յախմբիլ լուսերամ երկնաբնակ սուրբ հոգւոց
Յայս առեան ահաւոր շրջապատ ի զուարթնոց՝
Առժամայն զերամբ շուրջ պատի հուր և բոց,
Շառաչեն ուժգնակի գոչք վերնոց մեծ փողոց.

Կայծակունք հողերևէք ցոլանան ի յամպոց,
Նիստ լերինն հիմնովին սասանի յոլոտոց.
Մրրկայոյզ փոթորիկ սուլէ յոյժ սաստկակոծ,
Թուալէն ի կայից աստեղաց բոյլք ծիրոց.
Համբառնան դլուխք երկնից, գեղու լոյս անմատոյց,
Երն ունի բնութիւնն եկի Տեառն աստուծոց:

Քայքայի գոյութիւնս յահաբեկ տեսլենէս,
Հող մահու առ քիմս իմ մերձենայ յայտնապէս:
Ահա սիրտ մեղմաշունչ հնչէ քաղցր օդոյ պէս,
Խաղաղէ զխռովեալ ճնաշխարհիկ դհանդէս.
Զգիտութք լուսազարդ աքօղէն դասք անդրանկաց,
Երնարկել սարաֆին Որ Էջին յեկ փառաց.
Հիասքանչ ձայն լսի սրբասաց նուագաց
Յօրհնութիւն անմահին, խնամարկուի մահացուաց
Մեծ առեանն ապա լուռ ակն ունի հրամանաց
Երարչին՝ յոյր աջ է չափ, կշիռ իրաւանց:

Հրամայէ. «Մեկնեսցի քուրձ սգոյ Հայաստան,
Գձնեսցի յերկր շքեղ ոսկեխայտ պատմուճան,
Լուասցի յարտասուաց դարաւոր տրտմութեան,
Խնկեսցի հաս յանդաշ երկնաբոյս կնդրկան:
Տուք նմա զքօղ կարմիր նախնեաց հարսնութեան,
Հնչեցէք յարարածս զերգ փառաց յաղթական.
Բարասիրտ, օխերիմ, խորամանկ, անպիտան
Թշնամիք եղկելոյս առ ժամայն բերկրութեան՝
Գրկեսցին ի կապանս անազատ գերութեան,
Մանեսցին չարաչար անփախձան նեղութեան:

Հնաւուրց Օձեալն իմ յիւր գահոյս արդ դարձցի,
Սեաւթոյր ամպ սգոյ ի նմանէ հերքեսցի.
Կեանք նորա, դառնացեալ աղէտիւք սոսկալի՝
Բարութեամբ, բերկրանօք, ցնծութեամբ փայլեսցի.
Յոյր անուան սէրն էր է՝ Օձեալն իմ յայն յեցցի,
Եւ Հարսն իմ անարատ ընդ նմա միասցի.
Յայն իմ յուղխ օրհնութեան հաճութիւն յորդեսցի,
Հայաստան զառամեալ առ նովաւ մանկասցի.
Դարն ոսկի մոռացեալ՝ արդ կրկին յայտնեսցի,
Սեռն Հայկայ յանդորր խնդութիւն զմայլեսցի:

1 Հոկտ. 1827. ի Տփխիս:

## ԱՂԵՐՍ ԱՌ ԱՄԵՆՕՐՀՆԵԱԼ ՏԻՐԱՄԱՅՐՆ:

Թագուհի փառաց, մայր անմահ Բանի,
Լո՛ւր պաղատանաց հոգւոյս եղկելի,
Որ ընդ արտասուաց ի խորոց սրտի
Յառաջէս մեզաց քեզ մատուցանի:
Պսակ կուսանաց, յաղթալի Հայեաց:

Մեղսամէր մօրք յաւէտ տաշարիմ,
Խղճիս սլաքօք հանապազ խոցիմ
Անթիւ յանցանօք յախտ չար փարակիմ,
Անձնս կապանօք մաշեալ փարանիմ:
Փառք նահատակաց, դիւրացս ողորմեաց:

Ապառաժ կրից յամեհի ալեաց
Հոգիս ցաւալից բազում ինչ կրեաց.
Չիք ելք հնարից, չիք ինչ դեղ կենաց.

Մեռայց, թէ ինձ կից չեղես, մեռ կենայ:
    Յոյս մեղաւորաց, յօգնել ինձ նայեաց:

Վարուք զաղօթս, գարշութեամբ մեղաց
Յինէն հերքեցի զգունդ հրեշտակաց.
Որդ կամ խղճմտի, դատարկ ի շնորհաց,
Զգամ սոսկալի յանձն իմ խէթ չարեաց:
    Պարծանք հրեշտակաց, յաւէտ ինձ մերձ կաց:

Զգեղ անմահ հոգւոյս ախտիւք նկրկեցի,
Զկեանս իմ կենցաղոյս ունայն ձօնեցի.
Վախճան եղկելւոյս ահա վտանգի,
Մահ ողորմելւոյս յանկարծ մերձեցի:
    Դեղ երկնաւորաց, մի՛ մերժեր զիս բաց:

Մի՛ երբէք թողուր զիս խոնջ կարեաց.
Յերկաթի անուր զիս չարն կապեաց.
Ձե՛լ զմութ փարագոյր իմ անհուն մեղաց.
Հպարտ եմ, վէս, կոյր, խաղալիկ դիւաց:
    Դրախտական կենաց, զաչս հոգւոյս արդ բաց:

Անեղ փեսային տապաստ պայծառ,
Երկրածնաց Փրկչին մաքուր տաղաւար,
Հայեաց ի հնչէն ծառայս քոյ թշուառ,
Յանեղ ատենին լեր ինձ լոյս, յոյս, ճար:
    Յորդ աղբիւր շնորհաց, արագ տո իմ դարձ:

7 Մայիսի 1828. ի Տփխիս:

## ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՄԻԴԵԱՅ։

Թարգմանեալ ի գրոցն Ազատեալ Երուսաղէմ. Երգ Դ.

Վախճանեալ ղուղէն մասնէ ի վրան,
Ուր քրիստոսախումբ զօրաց էր գարան.
Ընդ անկարծ փայլել գեղոյ չքնաղին՝
Շշունչք, հարցափորձք աստ անդ ծնանին։
Քաջք առ նա դիմեն, տեսեալք հառաչեն.
Զաչս ի նա մխել՝ ինքեանց կեանք կարծեն։
Որպէս նորանշան աստղ ինչ գիսաւոր
Զաչս հանուրց գրաւէ լուսով ահաւոր՝
Նոյնպէս Արմիդէ. այս դէք տարփածուաց,
Գերէ զեւր տեսողս, մանէ կապանաց.
Այլ զարամբ վաղէ, հծծեն, հարցանեն՝
«Ո՞վ է այս չքնաղ, ուստի՞ գայ». հալին.

Կիպրոս և Դեղոս և Արգոս նոյնպէս,
Անգոյդ հայրենիք աղջկանց երկնապէս,
Զայսպիսի լոյս գեղ, պայծառ, հրաշատես,
Զայսպէս սխրալի երբէք ոչ տեսին։
Նորատունկ նոճւոյ իրանն է նման,
Ուղիղ, դիւրաթեք, բարձր, պատուական.
Ոսկեգոյն հերաց հարուստ հիւս շքեղ
Յակն ականողին արկանէ խատիղ.
Ի բնէ են գանգուրք այս հերք պաշտելիք
Սիրահար հողմոց քնքուշ խաղալիք։
Հայեացք նազելիք՝ սիրոյ տեսարան.
Յայտս նորա փթթին նարդոս, վարդ, շուշան։
Ի վերայ շրթանց, կրից շնչարանին,

Ուր մոլին նոքա, կիզին, տոչորին՝
Ճոխափայլ պանծայ վարդ կոկոնապատ,
Ախորժ, հոգեհան, յիրանց բուրելին։
Յատակ կուրծք նորա չքնաղ փողփողին
Հանդէպ նորանիստ ձեան սպիտակին։
Աստ սեղան սիրոյ, աստ հնոց փափագին,
Աստ հուրք ցանկութեանց բորբոք վառվառին։
Բողբոջ տեսանի խեղճ ակնարկողին
Մա՛ն երկուց հրաշակ բլրոց կաթողին,
Յորոց գկէան մեծ անդութ ծածկութին
Գաղեալ՝ պըծղէ յաչաց տարփածուին։

Այլ զո՞ւր է այդ ջան. ուր աչք մեր տեսա՞ն
Թէ յի՞նչ ժամանէ, ո՞ւմ տիրէ անա՞ն
Անդ միոք խանդակաթք արձակ համարձակ
Մտեալ վայելէ զեւր աչաց վատակ.
Առաւել դաղտնեօք, քան եթէ յայտնեօք
Գերի, կաշկանդի սիրոյն կապանօք։
Առ գեղ ձորձապատ յանկարծ յարձակի,
Անձկալույն ի սպաս անձնատուր լինի։
Որպէս շողն, անխոչ անցեալ յապակի,
Թողու զնա անբեկ յիւրում վիճակի՝
Նոյնպէս տենչն անցեալ ընդ կար հանդերձի՝
Ձիւսեալ խիթք յղձալին հանդչի.
Խաղայ, շուայտի, մօք պատկի
Ընդ իւր չքնաղի, առանց խափանի.
Յիւր արեան բորբոք զգայ գհնոցի,
Թունով քաղցրացեալ՝ զմահ կեանք համարի։

Արդ այս օրհորդ սիրոյ ճոխապանծ
Ընդ խումբ մարդաշատ ահեղ դիւցազանց.

Անթիւ գովեստից շուինդք մեղմաձայն
Յետուստ, յառաջոյ չքնաղին երթան:
Ձականէ յոչ ինչ, զամենն տեսանէ,
Զյաղթութեան պսակ անմարտ զբաւէ:
Կատու . . . զմերձակայս օդոք պաշէ,
Նետաձիգ լեզուաւ անոյշ կախարդէ.
«Զխեղճ որբիկս, ասէ, առ Գոթփրէթ ածէք,
Զաղէտս իմ նմա շոյտ յուշ արարէք». . .
Մուսաքէ, կրտսեր եղբայր արքային,
Մուսաքէ, անխորձ, կայտառ պատանին,
Զձայն նորա լուեալ՝ ցնորի, կաթոգնի,
Գեղոյն ճաճանչիւք անհուր հրկիզի:
Ջանդէս թրթռոյ առ այս հուր ճեպէ.
Զմահուն իւր թակարդ նա ոչ նշմարէ:
Մին, եսև, կորեաւ, ա̅խ, անդարձ կորեաւ,
Յանկը, յանդատակ վէհ կրից անկաւ:

Որպէս տապրական հուրն անշուշտ ծախէ,
Զիւր պատրաստ ճարակ յաճիւն փոխարկէ՝
Նոյնպէս զանդգամն, զաշխոյժն Մուսաքէ
Ջրացայտն Արմիդէ հուրբ սիրոյն այրէ:
Ո՛ դշխոյ, ներեա ինձ այսպէս կոչել
Զքեզ, յում հողածնի չէք ինչ նշմարել. . .
Զի երկինք չկարեն այսպէս պաճուճել,
Զդուստր մահկանացուի ի հրեշտակ փոխել. . .
Նա, ուստի՞ դու, ընդէ՞ր, յի՞նչ վախճան.
Ի բաղդէ՞ մերմէ, թէ առ քոյդ օձան:
Ուսո՛ մեզ զարժանն քեզ յառաջ բերել,
Զողջակէ՞զ թէ յո՞րդ կամիս ախորժել: . . . .

20 Մայիսի 1829. ի Տփխիս:

## ՎԱՐԴԱԿՈՐՈՅՍ:

Այգանայ ահա, այգացաւ ահա.
　　Ե՜լս, սոխակս հեծէ, գնի անզգայ:
Լայ չառնէր երէկ. այսօր շատ ողբայ.
　　Վարդն իւր չերևի, այգն է ցայգ նմա:

Աւա՜ղ վիճակի անբաղդ սոխակին,
　　Որ կեանքն ի հնոցի սիրոյ առչորին:
Ա՜հ, ո՞ւր ես, եկ, հա՛ս, օգնեա թշուառին.
　　Դու պատն ես այլոց, քաղցր ես անբաղդին:

Գալք, սալք, ծերպք, անձաւք, մթագած փապար
　　Զառն եղկելւոյն նինջ, քուն և դադար.
Աչքն ի յոյժ լալոյ եղև լուսադար.
Այլպէս խիստ ցաւոյ ո՛չ գեղ կայ, ո՛չ ճար:

Բամէ զուշն ի կուրծս, աքնի հանդուրժել,
　　Անօրէն բաղդին գերիս իւր հնազանդել.
Եղո՜ւկ, նա խարբ. չէ՛ կարող ժուժել.
　　Ուժգնութեան սիրոյն ո՞վ կարէ յաղթել:

Արդ սիրտ սոխակին է խոց, վիրաւոր,
　　Լեարդն լեալ հրաբուն, փետուրքն՝ բիւրաւոր.
Նա զուրկ ի վարդէն շրջի խելացնոր,
　　Յաւոտ, աղէխարշ, կիսամեռ, անզօր:

10 Մարտի 1831. ի Հալպաւ:

## ՍՈԽԱԿ Ի ՅՈԳԵՎԱՐՍ:

Առ քեզ յաւանդ զողջոյն իմ սիրտ, վարդ պայծառ, բոցավառ.
Ուր և եղէց՝ միշտ քո եղէց սիրահար, սրահար,
Լալով մեկնիմ, կեանք իմ, ի քէն ողբապատ, ոչ խայտառ.
Փոյթ չքացին բուքք ձմերանս, չարաչար, խռովարար.
Ի քաղցրաշունչ գարնանն է մեր մխիթար:

Ամօթխած կերպ մանուշակին յոյժ չքնաղ, յոյժ չքնաղ,
Մեզ աւետէ զձեանց հալել յոյժ փաղփաղ, անդանդաղ
Մայրք, սօսիք, նոճք սաղարթազարդք՝ են ի խաղ, անդրաղ,
Բախձան կազմեալ զմեզ հրաւիրեն ի ծիծաղ, ի ծիծաղ.
Գուշակ լինին զաւուրց բարեաց և խաղաղ:

Դու հոգեզուարճ ազնիւ իմ վարդ պատուական, կարմրեր-
փեան,
Յե՛րբ ի սրտիդ կացցես սքօղեալ հոգեհան, կարկեհան,
Աչաց իմ լոյսք քով կարօտով քաղեցան, քամեցան,
Անգամ մի ցոյց զգեղդ բոսոր հրաշագան, աննման.
Աշխարհ խնդայ, ես միայն եմ ի շիւան:

Րոպէքս թուին առանց վարդիդ դար երկար հոգեմար,
Ինձ յայց փութա, ահա եղէ ննջապատ, շատ դժուար,
Եթէ տեսից զքեզ մօտ մահճիս մահարար, տրտմարար՝
Անոյշ հոտովդ դարձայց յուշ իմ ցարդ խաւար, հեշտաբար.
Յայնժամ ոչ ոք զիս կոչեսցէ հէգ թշուառ:

Ա՜խ, քո յամեալդ և երևեալդ անագան, սիրական,
Ներկէ արեամբ զիմ սիրտ ու լեարդ եղկական, ողբական.

Ցայգ ու ցերեկ կամ յախ ու վայ, ի վարան անպայման.
Զքեզ որոնմամբ համայն ոսկերքս մաշեցան, չորացան.
Արդ մեռանիմ. բարեաւ Մեա՛ . . . անսասան:

12 Մարտի 1823. ի Հաղբատ:

## ԿՈԿՈՎԱՆՔ ՎԱՐԴԻ:

Յարեաւ յոսկեղէն, յանկամուտ մահճէն
Ահեղ առաւօտ ի զարդ ամպեղէն, ի ձորձ լուսեղէն.
Արի՛ք, խանդակաթք, դուք տեսէք ձեղէն,
Ո՛ստ գով ասացէք սիրոյն գեղաղէն, գեղոյն հրաղէն:

Լխալոյս լուսին, զարդ ամպոց մթին,
Փառք գիշերացեալ սրտիս ցաւագին, հոգւոյս տրտմագին,
Ա՛ռ իս նշողեան գքո շող պանծագին.
Էկեզ սէրդ զաղխա՝ քեզ միշտ կաթոգին, ըզք միշտ գալարին:

Մ՛ոլորին իմ միտք, լեզուս պապանձի,
Բարունիւ գքէն ոչ զօրէ յայտնի, առ չարացն ահի.
Գնարանէ քո գեղ զոխրա փոքու, մեծի.
Իւ քեզ տոկացից, ոտճխ պաշտեցի, անզոյգ յաշխարհի:

Արե բարեբար, զվարդն իմ ջեռո
Նախածագ լուսոյգ, եռանդեամբ լցո, զարթո, փայլեցո.
Բակեալ է, չքնաղ, գերդ, ջինջ ծով սիրոյ,
Արժանի շողոյդ ջեր, գթոյ, լուսոյ, մաքուր ի տապոյ:

Ես յանձնանէն ցարդ զուրկ մնացի,
Աչօք գողանալ գնա ոչ կարացի, շատ գուն գործեցի.
Նախտա, վա՜յ, ամօթ անզուեթ օրհասի,
Զօրէն անողորմ, անհաշտ ոսոխի, ժանտ մարդասպանի:

14 Մարտի 1831. ի Հաղբատ:

## ԴԱՒ ԵՐԵԽԱՅՈՒԹԵԱՆ:

Աչք իմ միշտ առ քեզ պշնուն, սիրելի,
Հանդէպ երկաթոյ, գերւոյ մագնիսի.
Չեմ երբէք ի քէն բաժան, անձկալի,
Նման լուսասէր խոնարհ ստուերի.
Սիրտ իմ քեզ յաւանդ ետու, Նազելի,
Անսիրտ կամ ահա, որպէս անշունչ դի.
Արդ խէթ հայեցիք զիս խոցոտելով,
Նման արեւու զաչս հողեղէնի՝
Զի՞նչ կամիս առնել, հո՛ւր անտանելի,
Մահու խղճալւոյս էր լինիս գործի:

Զքնաղ դիմաց քոյ ի կերպ հրեշտակի՝
Քաղցր ակնարկ, ծիծաղ, ժպիտ յարմարի.
Քոյ անոյշ ձայնի, սրտակէզ լեզուի՝
Խորոտ բարբառ, բիրտ բան ոչ է արժանի.
Կարմրերփեան շրթանցդ նուրբ, զարմանալի՝
Զուսպ, անխօս կայն է մեղք անմերելի.
Այդ քո հրաշակերտ, անզոյգ երանի
Բարք հեզ, դիւրանուաց միայն պատշաճի.
Քեզ չէք ինչ նման յոլորս աշխարհի,
Ո՛վ ի քեզ հայի՝ անշղթայ կապի:
Հայեաց ի պարզ ջուր կամ ի հայելի,
Տես, թէ զի՞նչ ես դու, սրտիս թագուհի.
Բայց սակայն, գուցէ ինձ նման գերի
Դարձցին քոյդ գեղոյ, գեղոյ անմահի:
Որպէս ծուխն ի վեր բնապէս ձգի,

Որպէս նետն առ իւր նպատակ բերի,
Որպէս ջուր վիժուած ի վայր սողոսկի,
Որպէս մարդ հիւանդ՝ ողջ լինել կամի՝
Նոյնպէս սիրտ, մայրիկ, իմ բոլոր հոգի
Դէպ քաղձոյ, սէր իմ, քեզ վառի, մաշի։

Զքնաղաց բզզով, զանուն և պատկեր
Շատ լուայ, տեսի յայս աշխարհ ունէր.
Յուդիթ, Սաթենիկ, Արտաշէս, Եսթեր,
Մեծ Աղէքսանդրայն, որ զաշխարհ գերէր
Պարք օրիորդաց ի Մոդքիս, յԵգեր,
Այն սիրով երբեմն Հոմեր հեծեծէր,
Աւարէն Յակոբեայ՝ որ գեղով այրէր,
Զքեռ իւրոյ նախանձ ի բոց արծարծէր՝
Առ քև չէ՛ն այլ ինչ, բայց միայն ստուեր.
Դու՝ տիւ անմահն, իսկ դոքա՝ գիշեր։

Թէ զքեզ յիշելով այդքան բորբոքիմ,
Ի զով քո բերկալ՝ այսպէս կաթոգնիմ՝
Տե՛ս թէ ի խօսիլս ընդ քեզ, հոգի իմ,
Զի՞նչ կրեմ, յի՞նչ բոց, յի՞նչ հնոցի կիզիմ
Յիշել զքո անուն չիշխեմ, պապանձիմ
Յահէ նախանձու մարդոց դիւաղէմ.
Զգեղ քո վայելել միշտ ոչ վստահիմ,
Հեռացեալ ի քէն թօշնիմ, թառամիմ.
Ա՜խ, յիւր կէտ վերջին եհաս սեաւ կեանք իմ.
Ա՜հ, ես ե՞րբ մեռայց, ե՞րբ հանգստեցից։

26 Ապրիլի 1831. ի Հաղբատ։

## ԳԱՐՈՒՆ:

Յամառվերջն ապրիլի պատուհանս բացի,
Զմիւնաթաղ դաշտորայս ծաղկազարդ տեսի.
Արտասուք եռանդունք զայտս իմ այրեցին,
Զիմ անդարձ գերութիւն յուշն իմ մուտ ածին:

Լեղուապէս գառնայան քիմք վհատ հոգւոյս,
Զմրեյան զգայարանքս, հատան ելք շնչոյս
Ափսոս ինձ, տեսցի բլուր անդամ յայն օր,
Ճշատ անէծս թափեցի ի ծննդեանս վաս օր:

Մաշեցայ, թօշնեցայ, մտի խոր ի քուն,
Զչար կսկիծ հէք այրւոյս արկի ծով յանհուն:
Դշխոյն մեծ անմահից էջ ինձ յայց տեսլեամբ,
Որպէս թէ ի փոսոյ զիս եղջ ձեռամբ:

Աներկմիտ մօտ մատեայ ի համբոյր ոտին,
Գերբնապէս սքանչելեօք զիս ազատողին:
Բամք ձայնեղ թռչնակաց ճոխ դայլայլեցին,
Կենսածին Տիրամօրն փառս վերերգեցին:

Երանի տեսցէք կարմրացայտ վարդս,
Քաջալերս տուք նմա ի գով պաշտպանիս:
Աւաղ ինձ, նեղասիրտ կարճամիտ լալոյս,
Զփառս զիս կարծեցի կորուսեալ անյոյս:

Նախատինք իմ՛ նեղչաց՝ նոա եղեն ինքեանց,
    Նանրացան դաւք նոցա, անկան յիւրեանց ցանց:
Ցաւագնեալք, օրհնեցէք զանուն Տեառն յաւէտ,
    Դի՛ք զյոյս ձեր յօգնութիւն Խաչին փրկաւէտ:

27 Ապրիլի 1831. ի Հաղբատ

## ՅՈՐԴՈՐԱԿ ԱՌ ՈՒԽՏԱՒՈՐՍ:

Յառաջ քան զլուսերար արեւուն երեւել՝
    Երթիցո՛ւք ի Սուրբ Խաչ զմեր սուրբ ուխտ կատարել,
Առաւօտոյ հօր մերոյ զքաղցր շնորհս վայելել,
    Միամիտ սուրբ սրտի Տեառն երկիր պագանել.

Լալագին զհրաշագործ Խաչ Փրկչին համբուրել,
    Մեր բազում յանցանաց քաւութիւն թախանձել:
Ընդ զանբիծ Տիրամայրն բարեխօս մեզ կալցուք,
    Զամէնօրդի Կարապետն մեզ նպաստ կարդասցուք.

Մեր հոգւոյ լուսատու զսուրբ Գրիգոր կոչեսցուք.
    Ընդ սոցա մաղթանաց զաղօթս մեր խառնեսցուք.
Դրանց փառաց քրիստոսեան տաճարին բաղձասցուք.
    Խունկ և մոմ լիաձեռն Նուիրակոյն մատուցուք:

Արբցո՛ւք անդ յաղբերացն ջուր անոյշ կենդանի.
    Ախտաբոյժ, թաւ ուռիքն՝ մեզ լիցին հովանի.
Բախացո՛ւք երկնաւոր ցնծութեամբ ի հոգի.
    Ո՛ւշ դիցուք նուագաց թռչնակաց սիրալի:

Երանի՜ եկողաց ի Սուրբ Խաչ վասն ուխտի.
 Նոցա սիրտ և հոգի՝ շնորհօք Տեառն լիացի։
Արդեօք ո՞յք ի վանացս ձեռնունայն գնացին,
 Իւրեանց սուրբ անարատ բաղձանաց ոչ հասին։

Նշանաւ Սուրբ Խաչիս գունդք գիւաց հալածին,
 Մեր հոգիք և մարմինք ի չարեաց ազատին.
Ցաւք և ախտք առ ի մէնջ առ ժամայն փարատին.
 Ո՜ն, եկա՛յք, երթիցո՛ւք յուխտ ի ծունր Սուրբ Խաչին։

15 Սեպտ. 1833. ի Նորն Նախիջեւան։

## ԿՈՂԿՈՂԱՆՔ ԱՌ ԽԱՉ ՓՐԿՉԻՆ։

Անարատ գառին քառատաշ Սեղան,
  Զէն ապահալած, կենաց դրաւական,
 Ինձ օգնեա՛, ողորմեա՛, ի թշնամեացս ազատեա՛։

Լարեն ինձ թակարդ ժանտից ջոկք ահեղ,
  Ցիմ կորուստ բերեն, երբ անհատ հեղեղ.
 Զիս զերծո՛, ապրեցո՛, քո նշանաւ ամրացո՛։

Աման յեզկելիս զմահաթոյն քաղբեց,
  Ընդ լաց իմ բերկրեն, ո՜հ, ո՞ւր դիմեցից.
 Պառաթեւ, լուսաձեւ, ձգեա՛ առ իս զքո սուրբ թեւ։

Մորմոք, սուգ, կսկիծ և երկունք մահուան,
  Անթիւ տառապանք զինեւ շրջեցան,
 Ապշեցայ, ցնորեցայ. Սո՛ւրբ Խաչ, օգնեա ինձ փութա՛։

*

Դառնացան իմ կեանք յորէս ծննդեան,
    Յո՛ եւ գնացի՝ միշտ գտի գարան.
  Հալեցայ, մաշեցայ, յամբարշտաց ոչ զերծայ։

Առ դրան տաճարիդ արդ կամ գետնամած,
    Հայցեմ զօգնութիւն Խաչիդ պարծանաց.
  Յիս գթա՛, խնայեա՛, զանհուն վէրս իմ բժշկեա։

Բախացո՛ զիմ սիրտ ձայնիւ ցնծութեան,
    Նորոգեա՛ զիմ կեանս, զիս ի հաղբից հա՛ն։
  Ո՛չ երթայց ի քոյ դրանդ՝ չեւ առեալ զիմ խնդրուած։

Նշանի՛ է ինձ, զի եմ քո ծառայ,
    Որդի աղախնոյդ, շնորհացդ ենթակայ.
  Յիս հեղցես լիապէս զԽաչիդ նպաստ յայտնապէս։

Արդ արա՛ առ իս նշան բարութեան,
    Ներկեա՛ ամօթով զնեղչացս երախան.
  Զիս կանգնեա՛, պաշտպանեա՛, ընդ հովանեաւդ պարսպեա՛։

ՆՇՈՎ սխրալի Խաչիդ յիս ծագի,
    Հոգիս նորոգի, յոյս իմ արծարծի.
  Փա՛ռք Խաչիդ Քրիստոսի, նեղելոյս ապաւէնի։

4 Մարտի 1834. ի Նորն Նախիջեւան։

## ԱՂԵՐՍ ԱՌ ՆԱԽԱՎԿԱՅ ԱՄԼՈՐԴԻՆ։

Մօր Մխածնի, անբիծ կուսին
ԶԲան հայրական, զոյն անքնին
Կացեալ առաջ յորովայնին,
Իջեալ ի մահ, ի զոհ խաչին.
Յովհաննէս, մեծ յորդւս մարդկան,
Լեր ինձ պաշտպան։

Բարուն քարոզ յոմբոստ առհմին,
Նախավկայդ մարդկան Փրկչին,
Տաճար շնորհաց արա Նորին
Զծառայդ թշուառ, կողկողագին.
Մկրտիչ Տեառն ի Յորդանան,
Լե՛ր իմ պաշտպան։

Ի մեղապարտ անուանակցէդ
Հերքեա զչարին ոխ, հալէ և նետ.
Զունիմ ինձ զոք, սուրբ Կարապետ,
Դու անյուսիս լե՛ր տէր, հայր, գէտ.
Ընդ արփւոյն ջինջ արուսեակ,
Հա՛ս ինձ երագ։

4 Մարտի 1834. ի Նոր Նախիջևան։

## ՍԱՂՄՈՍ ԺԵ:

Աստուած, լո՛ւր ձայնի իմում, չարք զարարածդ տագնապեն.
Զիս իբրեւ կաւ գունհաց՝ պապանելով ընդոտնեն:

Աղաղկեն առ քեզ դոչեմ, Հա՛յր իմ, լոյս, կեանք, ապաւէն,
Զի նոցա դաւք անդադար յիս տեղան անձրեւօրէն:

Ա՛ռ զիս, Տէր, ծածկեա ընդ քո ամրածածուկ հովանեաւ,
Զերծո զիս նոցա ժանտ, պաշտպան լեր քո ապարաւ:

Մի՛ երբէք թողուր նոցա կատակել զքո պատկերաւ,
Զքեզ յերկինս՝ զենքեանս յերկրի մոռանալ շտապ տագ-
նապաւ:

Դու ի գիրս անանց կենաց զիմ տառապանս նշանեա,
Զարտասուս ողորմելույս յանօթ անբեկ ամանեա,

Ընկորուստ առ քեզ պաշեմ . . . ինձ այժմ ազդու դեղ
շնորհեա.
Տմարդեաց զոյժ և զաստ յինէն արագ փարատեա:

Բազին ցանդ ի վերայ իմ, զիս անտերունչ համարին,
Զիմ ողբովք, հառաչօք տառամնարաց ծիծաղին:

Եթէ ոչ կարկառեսցես ինձ նպաստ քոյ սուրբ ձեռին՝
Զարաչար զիս լլկեսցեն, զանուանս յերկրէ ջնջեսցեն:

Առաքեմ առ քեզ, յոյս իմ, զբան աղօթից ողբագին.
Ընկա՛լ զայդ իբրև զխունկ, յիշեա՛ զծառայդ ցաւագին։

Նշաւակ եմ յաշխարհի, շատք ի վիճակ իմ նային.
Յիշեա՛, Տէր, զքո զուխտ ընդ իս. աւուրքս ի մուտս
հասանին։

4 Մարտի 1834. ի Նոր Նախիջևան։

## ՍԱՂՄՈՍ ՃԼԹ։

Ապրեցո՛ զիս, Տէր, ի մարդոյ չարէ,
Զերծո՛ զիս, փրկեա՛ յանիրաւ առնէ.
Սիրտ նոցա է վէհ խորհրդոց չարաց,
Վիճի և կռուոց, նենգոտ խաբանաց։

Զլեզու իւր սրէ ըստ լեզուի օձի,
Ընդ շրթամբք զաղէ զթոյն անգութ իժի։
Պահեա՛ ի ձեռաց անն ապիրատի
Զհոգի իմ, զմարմին, յոյս ապաւինի։

Խափանել խորհի նա զգնացս իմ բարի,
Գաղտ որոգայթել զանձն իմ դարանի.
Թակարդ հնարի՝ զայթ ոտից իմոց,
Շուրջ զինև դնէ զանթիւ հազր դաւոց։

Այլ դու, Աստուած իմ, հայր արարածոց,
Խոնարհեա՛ց ի ձայն աղօթից իմոց,
Տէր, Տէր, զօրութիւն փրկութեան իմոյ,
Յօր չար՝ հովանի արա գլխոյ իմոյ։

Մի՛ յիս լռացին խղճք մարդոյ ժամանի,
Որ զուր վտանգէ զանձն իմ ցաւալի:
Զի մի՛ բարձրասցի հպարտ սիրտ նորա,
Մի՛ կատարեսցին վատ խորհուրդք նորա.

Այլ ծուխ մահահոտ դարշ շրթանց նորա
Շնչասպառ անդարձ կորուսցէ զնա:
Նեղուանուցն գործք միշտ անյաջող կացցեն,
Զայր չար ի կորուստ իւր գործք որսասցեն:

Ծանեայ՝ զի առնես, Տէր, դատ աղքատիս,
Վրէժս զկրաւորս ընդդէմ հալածչիս.
Զանուանդ ահաւոր արդարք օրհնեսցեն,
Ընդ քո հովանեաւ անահ հանգիցեն:

## ԱՊԱՇԱՒ:

Տէր ամենակալ, Աստուած հարցն մերոց,
Անաչառ տեսուչ երամոց սրբոց,
Հաստի՛չ աշխարհի և նորին զարդուց,
Շնորհեա զթողութիւն իմոց յանցուածոց:

Ո՛չ դու սանձեցեր զլրութիւն ծովուց,
Անդարձ հրամանաւդ փակ եղեալ խորոց,
Ունքեալ զամենայն յանուն փառաց քոց.
Ե՞ր յամես ներել իմոց յանցուածոց:

Մի՛վ է յաշխարհի յանթիւ հատուածոց,
Քոյդ անհարկութեամբ ի գոյ ածելոց՝
Որ ոչ յահ և դող, յաղաղակ ողբոց
Ի քէն հայցեսցէ զներումն յանցուածոց:

Մեծ են, Տէր, վայելք ահեղ փառաց քոց,
Անճառ, սոսկալի սաստք սաստիկ պատժոց.
Անչափ, անքննելի աղբիւր խնամոց.
Մոռա՛ զդիզացեալ բեռն իմ յանցուածոց:

Դու երկայնամիտ Տէր բարձանց, ձորոց,
Դու հայր բազմողորմ անառակուանչ որդոց,
Դու հնարք փրկութեան առ քեզ դարձելոց.
Դու փութա՛ ջնջել զախտս իմ յանցուածոց:

Զոր սիրես՝ խրատես ըստ սուրբ կամաց քոց,
Անկորուստ պահես զթիւ քո որդւոց.
Զիս պատժեալ՝ ցուցիր զգութ քոյդ խնամոց.
Արդ ե՛ղծ զգիր իմոց անթիւ յանցուածոց:

Աչք իմ՝ անարժանք տեսոյ շնորհաց քոց,
Ականջք եղկելւոյս՝ աւետեաց լսոց.
Ուխտազանց եղէ անլուր սաստից քոց.
Թո՛ղ ապերախտիս խոհերս յանցուածոց:

Բռնութիւնք կամաց մեղանաց իմոց
Ուժգին խոշտանգեն զկամարարս այսոց.
Արդ անյոյս, վհատ՝ ի սրտիս խորոց
Գոչեմ. Տէր, ներեա՛ իմոց յանցուածոց:

Ոճիրք իմ բարձրեալ զԱստուածդ աստուծոց
Շարժեցին ի սաստ դիւրոյս բազմակոծ.
Թէ ոչ ինձ հասցեն նպաստք շնորհաց քոց՝
Ընկլայց ի յորձանս իմոց յանցուածոց:

Զիմ սիրտ արարի մեհեան պիղծ կռոց,
Այլանդակ կիրք իմ տիրեն իմ կրծոց.
Այանում ծանրութեամբ զաղէր խորհրդոց.
Լուա՛, Հա՛յր գթած, զբիծս իմ յանցուածոց:

Մեղայ, գլորեցայ չար մեղացս ի հնոց,
Տոչորէ զիս անդ մշտարծարծ մեծ բոց.
Գերեցայ ինձէն թշնամւոյն հոգւոց.
Հա՛ն, Տէ՛ր, փարատեա՛ զմէգ իմ յանցուածոց:

Մի՛ զիս մատնեսցես ի կուլ դժոխոց.
Մի՛ տրտմեցուսցես զգունդ անմահ զուարթնոց,
Տէ՛ր, քոյ եմ որդի, գործ սուրբ ձեռաց քոց.
Կամեա՛ց զիս սրբել յիմոց յանցուածոց:

Դու ոչ ընդոտնես զաղերս դարձելոց,
Ի գբոյ մեղանաց ի վեր ելելոց.
Արդ ծագեա՛ յիս լոյս անհուն բարեաց քոց,
Փրկեա՛ ի հոգւոյս զկեղտս իմ յանցուածոց:

Կեցո՛ զիս, Աստուած, ձեռամբ քոց խնամոց,
Հանգո՛ ի կաճառս անմահ զուարթնոց,
Զգեցո՛ ինձ հանդերձ անեղծ շնորհաց քոց.
Աա՛ Ներեցի քոց դարշ յանցուածոց:

## ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ԻՍՐԱՅԵԼԻ:

Գուսան:

Ո՞վ է աստ Յակովբ, Սահակայ որդի,
Հայր տերանց իմոց, այր երանելի,
Ծանօթ Աստուծոյ ինձ անծանօթի,
Հինաւուրց, ընտիր, մաքուր ծերունի:

Յակովբ:

Ես եմ այն Յակովբ զոր, ա՛յր դու, խնդրես,
Հայր գերդաստանիս՝ զոր աստ տեսանես.
Յումմէ՞ յղեցար, զի՞նչ կամիս, ո՞վ ես,
Նա՛ աներկիւղ, զի՞ է, զի՞ սարսիս:

Գուսան:

Ա՜խ, ո՞վ ալեզարդ ծառայ անեղին,
Յեղծական մարմնի հրեշտակ անմարմին,
Երջանիկ քո կեանք, վարուցդ ամբծութիւն
Զիմ լեզու կապեն, զիմ հագագ փակեն:

Քոյ որդիք առ քեզ զիս առաքեցին՝
Լինել գուժաւոր քում յալեաց անձին.
Քոյ Յովսէփ չքնաղ հրեշտակ պատանին
Գազանաց մատնեալ է յանտառ մթին:

Անդամ ինչ մարմնոյն ոչ ուրեք տեսաւ,
Եւ ոչ այլ նշան, գլխարկ կամ հալաւ.
Այլ այդ պատմուճան արիւնաթաթաւ
Ի հովուաց ոմանց գտեալ՝ մեզ բերաւ:

Աղէ՜, տե՛ս, տէր իմ, ո՞յր է պատմուճան
Յովսեփայ մաքուր քոյ անմեղ մանկան.
Որում զանբաղդին վաղահաս վախճան
Եւ զիս արձակեա՛ յիմ լքեալ անդէնայն:

Յակոբ:

Այո՛, այս ծաղկեայ ընտիր պատմուճան
Է՛ որդւոյ իմոյ, զոր եկեր գազան,
Սայրասուր ժանեօք արկեալ ի կործան,
Վագր, արջ, գայլ, առիւծ, կամ այլ չար գազան:

Ո՛հ, Յովսէ՜փ Յովսէփ, ցուպ իմ ծերութեան,
Շնորհալի, քաղցրիկ, քնքուշ, գեղազան,
Աչեղ, միայն, կարմրայտ, քաղցրաբան,
Խարտեաշ, գանգրահեր, մանուկ անման.

Ո՛վ զիս ստիպեաց զքեզ առաքել
Անցուպ, անընկեր, յուղի անընտել.
Արդախանձ գայլոց կերակուր անել,
Զորդիդ իմ զգօն զուր կորուսանել:

Վա՜յ ինձ, ազալի անբաղդ ծերունւոյս,
Այրի, անսփոփ, տխուր անորդւոյս.
Ա՛բէլ և Յովսէփ, իմ կեանք, աչաց լոյս,
Իջեալ ի շիրիմ՝ զիս թողէք անյոյս:

Հարսունք և Նուաստունք Իսրայէլի:

Ո՞ւր է, Նախահա՛յր, լալ և աշխարել,
Զանբաղդին անուն անդադար յիշել.
Որդւոց զմեռեալն չէ մարթ յետ կոչել.
Լա՛ւ է անտրտունջ կալ և համբերել:

Յ՚Եդեմայ ցայսօր չիք ուրուք լուեալ՝
Զմեռելոյ ուրեք կրկին յարուցեալ.
Ապա զի՞նչ օգուտ անափոփ ողբալ,
Նեղել, մորմոքել, արտասուել, ողալ:

Մետասան որդիք կան քո կենդանի,
Առողջ, չափահասք, գործունեայք, արի,
Հարուստք և թոռունք քո, քեզ սիրելի
Կարեն զանբաղդին ունել զանեղի:

Յակոբ:

Տառապանք և վիշտ զանձն իմ մաշեցին,
Աչք իմ ցնծութիւն ոչ ուրեք տեսին.
Յայնժամ իմ յօղուածք բերկրեալ խայտացին՝
Յորժամ զես տեսից ի շունչ իմ վերջին:

Չէ նա վատաբաղդ, որ վաղ մեռանի,
Այլ որ յետ մահու սիրելոյն ապրի.
Արդ կեանք իմ մահ է, մահ՝ կեանք ցանկալի.
Փափագիմ գտնել յորովայն շիրմի:

Ո՜հ, որդեա՜կ որդեա՛կ, զես բարձ, առ քեզ տար,
Մի՛ թողուր զես աստ տանջել չարաչար.
Ես՝ քո մոլորակ, դու՝ արփի պայծառ.
Առանց քոյ զինեւ պատեալ է խաւար:

Մահաշունչ, ժռատ, կարճունչ ծերունի,
Ճաղատ, չոր, կաղ, հիւծ, խրտուիլ անձոռնի,
Մեռելոց իշխան կիմաք սոսկալի,
Համայն կենդանեաց տեսիլ ատելի,

Ոչ երկնար յինէն, յիմ անբիծ վարուց,
Յիմ պահապանաց՝ յանմարմնոց պարուց,
Յանապառ շնորհաց, յիս յերկնից հեղլոց,
Յիմ ամենիշխան Տեառնէ աստուծոց.

Անգութ, ձգեցեր զքոյ սուր զերանդի,
Հնձեցեր յերկրէ զիմ Ռաքէլ բարի,
Զիս ի սուգ արկեր, յողբ անտանելի,
Զիս միայն թողեր այրի տրտմալի։

Մինչև էր բուժեալ վէրք սրտի իմոյ՝
Նոր վիշտք, նոր արկածք, նոր աղէտք ազոյ,
Նման կարկտածին թխպայորդ ամպոյ՝
Տեղացեր ի գլուխ թշուառս ծերոյ։

Զիմ Յովսէփ յաշխարհ մեռելոց տարար,
Պատանեաց ժանեօք հերձեր չարաչար.
Զանձն իմ կիսամեռ, տրտում, ոգեսպառ
Ի վտանգ վերջին հասուցեր իսպառ։

Ահա պատմուճան նազելի որդւոյս,
Ռաքելայս երկանց անդրանիկ պտղոյս,
Յարիւն շաղախեալ անմեղ աղաւնոյս,
Խոնարհ, հնազանդ, խոհեմ սիրելւոյս։

Զիմ չքնաղ Ռաքէլ ի հող ծածկեցի,
ԶՅովսէփ գեղեցիկս այսօր կորուսի.
Արդ կամ անսփոփ անզաւակ այրի,
Նեղեալ վարանեալ անդադար ծերունի։

## ԲԱՆՔ ՄՈՐ ԽԱՉԵԼՈՅՆ։

Ո՛վ պարտէզ ծաղկալի,
Քան զեդեմ ցանկալի,
Քեզ հազար երանի,
Զի աստաչիդ ես տեղի,
Որդւոյս միածնի
Փրկչիս Քրիստոսի։

Գերագոյն ես երկնից,
Գովելի քրովբէից,
Բաղձալի անմահից.
Զի էակն համայնից
Ի քեզ պարագրի,
Ի քոյ սիրտ թաղի։

Պարտիզպան, յիս գթա,
Քաղցրութեամբ յիս նայեա՛
Յարտասուս իմ խնայեա՛,
Յաղէտս իմ անկարեկեա՛.
Յորդւոյս գերեզման
Ինձ առաջնորդեա՛։

Զիս թաղեա՛ ընդ որդւոյս,
Դի՛ր ի գուբ ինձ անլոյս.
Զի ա՛ստ է եղկելւոյս
Որդի, Տէր, կեանք և լոյս.
Ա՛յց արա գերւոյս,
Ցո՛յց զանձն որդւոյս։

—Այն դու, զի՞ ցաւագնիս,
Անափոփ մորմոքիս.
Խնդութեանց աւետիս
Լուր յինէն, սիրելիս.
Քո որդին իմ ես,
Զոր մեռեալ կարծես:

Մահակից ինձ ցուցար,
Զոհ անհուր յայտնեցար.
Յարդարոց ի կաճառ
Պարագլուխ հանդուցար.
Երդ, մայր խաչակից,
Լեր ինձ փառակից:

Տէ՛ր, որդեակ, Աստուած իմ,
Տես զբորբոք սիրոյ իմ.
Կարօտով քով կիզիմ,
Յորդ խաւար էր կեանք իմ:
Տանջիմ, մեռանիմ
Առանց քո, կեանք իմ:

—Դուք զուարթնոց, արդ իջէք,
Զմայրբ իմով շուրջ կացէք,
Սուրբ դափնեաւ պսակեցէք,
Զտխրութիւնն սփոփեցէք
Դշխոյիս երկնից,
Զմօր Հաստչիս էից:

## ԼԱՑ ԴՍՏԵՐՆ ՅԵՓԹԱՅԵԱՅ։

Դատ. ԺԱ. 30. 40։

Յաւուր կենաց կուսանիս,
Յարշալոյս աւուրց անմեղիս՝
Խորշակ մահուան տարածի.
Ա՜խ, լոյս աչաց պակասի։

Ա՜յ ծանօթք, լերինք և հովիտք,
Ա՜յ պայծառ դաշտք ծաղկափթիթք,
Ահա ի ձէնջ հրաժարիմ,
Փութով եղայց ի շիրիմ։

Լացէք զիս, ով անտառք, բլուրք,
Լացէք. հարք, մարք, եղբարք և քորք,
Զիս փոյթ զենցէ սուր ուխտին,
Յօդուածքս այժմէն սարսափին։

Արիւն իմ է գին փրկութեան
Դիցամոլ ամէն իսրայէլեան.
Մեղապարտքն ազատ մնան,
Անմեղ կեանք իմ չքանան։

Մայր իմ, ո՜հ, դու մի շատ ցաւիր,
Հօրս ուխտի բնաւ մի ներհակիր.
ՅԱստուած փրկիչ կոյս քո գիր,
Ի՛եր զգալըս իմ, մի տխրիր։

Դուք, դստերք տոհմիս յակոբեան,
Շուրջ զինև կացէք միարան.
Երգեցէք զերգս հարսնութեան,
Միշտ տօնեցէք զիմ վախճան:

Աստուած մեծ, փառք Իսրայէլի,
Օ՛վ ընկալ, երբ զհոտ կնդրկի,
Երբև զզօհն Աբէլի,
Երբև զորդին Սառրայի:

Բարունեաց վճիռ համաձայն
Ոչ կարաց մահուս տալ խափան.
Տէր, դու ինձ լեր օգնական,
Դու հեշտ արա զիմ վախճան:

Եղկելոյս ծնողք ցաւալի
Մնասցեն տանից զաւակի.
Շնորհեա նոցա սիրտ արի,
Մեղմեա զմորմոք ցաւոյն վշտի:

Աւադիկ երամք հրեշտակաց
Եւ երկինք կան թևատարած.
Օ՛վ հրաւիրեն յայգին բաց,
Օ՛վ կոչեն հարսն հօր փառաց:

Նկարէն քօղն իմ հարսնութեան
Փոխարկի ի պատան Թաղման.
Իմ պճնազարդ հարսնարան
Եղև այս խոր գերեզման:

Ցուցէք ինձ զիմ մահու գործի,
Զաուրր զէն զօհիս արժանի։
Արդ ողջ լերուք, սիրելիք,
Օրհնեալ է Տէր, պիղծ են դիք։

## ՄՕՐ ԱՂԵԿԻԶԻ ՈՂԲ ՔԱՏՄՆԵԼԻ ԸՆԴ ՄԱՀ ԱՆԴՐԱՆԿԻ ՑՕՏԱՐ ԱՇԽԱՐՀԻ։

Հոգեզուարճ դարձիր, հոգեկից որդեակ,
Ես ցայգ ու ցերեկ բաց աչօք սպասեմ.
Ի սունջեան յուսով զես խորեմ, որդեակ,
Զգիշերն երազովք միշտ ընդ քեզ խօսիմ.
Ո՜հ, երբ եկեսցես, զես երբ սփոփեսցես։

Իմ սիրտ մայրենի, իբրև ջուր յստակ,
Զպատկերդ ցուցանէ յինքեան պարզ, որդեակ.
Ա՜խ, մեղցի իմ սիրտ, սիրտ արամագուշակ.
Քայքայիմ, հալիմ, կաթոդնիմ, հաշիմ.
Զիս երբ սփոփեսցես, երբ տեսցես որդեակ։

Միանգամ ցոյց մօրդ զերեսս քո, որդեակ,
Միանգամ լուայց զձայն քո, որդեակ՝
Ճանեթք երկնահոսանք զսեաւ կենաց իմ թել
Փութասցեն ապա կտրատել, խզել.
Ի սէր քո կիզիմ, տոչորիմ, որդեակ։

Ո՛ դիտէ, թէ յոր անկեան աշխարհի
Ի մէջ օտարաց, յաղտոտ անկողնի,
Հիւանդ, անխնամ, մերձ մահուան զքի
Մա՜յր ձայնես, և ես կամ ի քէն հեռի.
Վա՜յ, ցաւի հոգիս, լեարդ իմ խարշատի։

*

Ի մէջ անկողնի ի մութ գիշերի
Յաճեմ երազի զորդեակդ իմ տեսի
Ի մահուան մահճի ի մեծ տագնապի.
Ձեռն իմ ձգեցի՝ առ քեզ ոչ հասի.
Երա՜զ նզովեալ. ուշ իմ ցնորի։

Փարիմ զքո տուփք, որդեակ նազելի,
Զահ լեցին իմ կեանք քեզ, անգին որդի.
Դու այդ դարձ առ իս, իմ հեզամեղ որդի,
Ընդ քո զե՛ս մեռո, կեցո զիմ հոգի։
Վա՜յ, քանի՜ դառն է մայրութիւն, որդի։

Համբար է վշտաց սիրտ մօր քոյ, որդեակ,
Անհուն են աչաց հոսանք արտասուաց։
Դու ինձ մխիթար, ծաղիկ անուշակ,
Խարիսխ իմ յուսոյ, իմ կեանք, լոյս, տատրակ,
Փութա, դարձ առ իս, ազատիմ ի կենաց։

## ԿՈԾ ՄԵՂԿԱՂԷՏ ԾՆՈՂԱՑ
## Ի ՎԵՐԱՅ ՎԱՂԱՄԵՌԻԿ ՄԻԱՄՕՐ ԴՍՏԵՐ։

Հրեշտակ շնորհաղէմ, վասն էր զմեզ թողեալ յոգս անմխիթար՝
Սահէին երկնացդ՝ անմահ փեսայիդ՝ փափագող գտար։
Ի քեզ նայելով, ի հոտ քո զմայլեալ, մեր վարդ բոցավառ,
փառաց խունկ անոյշ էիցս Էակի տայաք անդադար։
Սիրտ մեր զկարեվէր յանկարծ խոցեցեր նետիւք մահարար.
Ո՞ւ առ քեզ մեղաք, գրաւական սիրոյ ամոլեցս շուար։
Մի՛ զմեզ, աղեկէզ, բազմադէտ ծնողքդ, մոռանար խայտ.
Այլ հրամանաւ էջ ընդ սուրբ զուարթնոց, զմեզ առ քեզ տար։

## ԱՆԷԾՔ:

Զհատակիրգուս զախտացելովս
Զերծ մի թողուր, աշխարհ, յախտից.
Զծաղրածուս զսխրահարուս
Աշխարհ, հաղորդ արա իմ կրից.
Որով զեկղուս սանձել ուսցին
Ի խոցելոյ գայր ցաւալից.
Եւ կրիւք վշտաց խիկ վշտակրաց՝
Գտցին պատրաստ զոլ կարեկից:

## ԱՆՈՒՐՋՔ:

Յառաւօտուց ի յանկողնի
  Մեր նազելույս զեռ լորովէր.
Անքուն զգիշերն ես անցուցի,
  Զի տանջէր զեռ նորա պատկեր

Լեզուս ցամաք, հոգւով վհատ,
  Տկար մարմնով կայի անկեալ.
Անուրջք անոյշք ի նինջ կիսատ
  Զթաց աչօքս կային սփռեալ:

Միշտ մտատանջ, միշտ կաթողին,
  Ալէկոծեալ նաւու նման.
Դեղն իմ ցաւոց սէրն էր անգին,
  Բայց չերեւէր նորայն նշան:

Այգին ցնցուղ ցայտեալ յիմ տուն՝
Մերժեաց յինէն զմէգ քնոյն.
Բանամ զիմ ուշ յանմ զգօսին
Ոտնաձայնի իմ նազելւոյն։

Երա՞զ է այդ, ժպտիմ մեղմով,
Հոգւոյս ամոքող և յարթնութեան.
«Աւա՜ղ գլխոյս, դաշնաց ձեւով,
Ընդէ՞ր մաշիս, սրտիս իշխան»։

Նազելւոյս ձայնն յունկն իմ հնչեալ՝
Յիս արծարծեաց զկայծ կենաց.
Ցնծութիւն ինչ հանդարտաւալ
Հոգւոյս մարմնոյս խակոյն տիրեաց։

## ՏԱՊԱՆԱԳԻՐՔ։

Եւ Հայկ պարագլուխ դիւցափառ արեաց,
Գլխահար Բէլայ, ձեր հայր անմոռաց,
Զիմ ողի, աշխոյժ, զիմ ձիր գերապանծ
Յողի Յովհաննու հեղի աննախանձ.
Որովք ի պարծանս իւրոցդ համազգեաց
Զայս յարկ խնամոց կանգնել կտակեաց։
Ո՜վ Հայ շնորհապարտ, յայս կոթող Հայեաց,
Գնա անխոտոր զհետ նորա շաւղաց։

Հայաստան, ո՞ւր է քո Յովհաննէս երկնաձիր։
—Ի գրկացս գնաց կորզեաց Պարկայից սեւ ջոկեր։
Դու ընդէ՞ր յաստ նոցա ոչ անկար ի խնդիր։
—Կաթողին աղերսիս ոչ գտան ունկնդիր։

Շառաւիղ բարգաւաճ գլուցային Արամայ,
Փարէլի որդեգիր գթոտ մօր-Ռուսիոյ,
Հայկազուն որդոց Հայր, յանձանձիչ անմոռաց,
Հիմնադիր հոյակապ տաճարիս գիտութեանց,
Բազմազան արգասեօք բարութեանց վէհ ցուցար
Հին և նոր Հայրենեաց ախրայէս պարտաւճար:

Արժանի դասեցդ ի կաճառ աստեղաց
Առ ծագել զանստուեր լոյս ի ցեղ Հայկազեանց.
Բանալի ժանգահար գիտութեանց բանալեաց,
Յովհաննէս, հայկածին տոհմիս թագ գեղապանծ:

Թխոտել ամպ մահու ընդ մեր փառս նախանձեալ՝
Առ ի մէնջ տարաժամ զգեղափիլ բերօղեաց.
Այլ սիրտ մեր՝ շնորհապարտ քով լուսով գեր փայլեալ՝
Յանմոռաց յիշատակ զայս կոթող քեզ կանգնեաց:

## ՆԻՒԹՔ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԱԼՔ:

Մեծաց անկ է գոլ տիպ բարեաց գործոց.
Զի բիւրք ընթանան զհետ նոցա հետոց:
Տկար է իշխանն, անարգ, վատանուն՝
Եթէ չէ աչեղ, հզօր և արթուն:
Անկցին տէրութիւն, կարգ և պետութիւն
Յանպատիժ թողուլն զչարաց լրբութիւն:
Միոյ չար գործոյ անմիտ թողութիւն
Բիւր չարեաց լինի արձակ թոյլտուութիւն:
Զսուրն աստուածաւանդ, զահն խմոց նեղչաց
Նա յիմ գլուխ իջոյց, զիմ բաղդ ընդունեաց:

Ը՛նդէր տխրատ է, վախկոտ, երկչոտ,
Ծ՛այրոց խորհրդոց յաւէտ կասկածոտ:
Յո՞ գնաց քո խիղճ, ո՞ գերեց սատանայ,
Ի՞մ խնդք բաղձաս, ո՞ զքո սիրտ մաշէ:

Զ՛արթեաւ տխուր, զմութ գիշերին ցնդեաց,
Նաւակեաց զփախուստ ապուշ պապշոտայ:

Ը՛նթաքուստ է սէր, քաղցր են վէրք նորա.
Սիրահար սլաք սէրն է անթեղայ:
Մ՛ի թոյնն է դեղթափ երկրորդեալ թունոյ.
Իսկ սէրն առաջին՝ է խոց միւս սիրոյ:

Մ՛ի հոգի չէ ստրուկ երկուց ներհակ կրից.
Մ՛ին սիրտ չէ մեհեան երկուց ահեղ դից:
՝Նա զինքն ինձ բաշխէ, զիս յինէն զրկէ.
Զ՛իմ սիրտ խանդակաթ անխիղճ կողոպտէ:
՝Ծով, լեռ, որդն և օձ, չքնաղին միջին
Սիրոյ աղեկցմանց անձայն հնազանդին:
Մ՛ահ, զանձ, կեանք, չար ցաւ, փառատակ, աքսութիւն
Ոչ կարեն մեղմել սիրոյ զբռնութիւն:

## ՎԵՐՋ:

2013

1489-1494